

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՎՊՄԻ)

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, Բ.Գ.Դ.

\_\_\_\_\_ Խաչատրյան Գ.Կ.

“\_26\_” “\_04\_” 2013թ.

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀԾ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

Ընդունվել է ՎՊՄԻ-ի գիտխորհրդի նիստին  
արձանագրություն թիվ 4, 12.06 . 2006թ.  
Փոփոխված է՝ գիտխորհրդի նիստում  
(արձանագրություն թիվ \_25\_ “\_04\_” \_\_\_\_ 2013թ., արձ. թիվ 4)

#### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ ՈւԽ) ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական-ընտրովի բարձրագույն մարմին է:

2. Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի (այսուհետև՝ ՎՊՄԻ) ուսանողական խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդը) ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները ՎՊՄԻ-ի ողջ ուսանողության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողության և հետբուհական կրթություն ստացողների շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, ինտելեկտուալ, ստեղծագործական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:

3. ՈւԽ-ը գործում է ՀՀ սահմանադրությամբ, գործող օրենսդրությամբ, ինստիտուտի և սույն կանոնադրությամբ:

4. ՈւԽ-ի կանոնադրությունը հաստատվում է ինստիտուտի խորհրդի կողմից:

5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՎՊՄԻ Խորհուրդը մասնակցում է ինստիտուտի հրատարակչական գործունեությանը, կարող է նյութեր հրատարակել ինստիտուտի կողմից հրատարակվող ամսագրերում, պարբերականներում և այլն:

6. ՎՊՄԻ-ի ղեկավար մարմինների, ստորաբաժանումների, ՎՊՄԻ-ում գործող, ինչպես նաև արտահամալսարանական գիտական, կրթական, մշակութային, հոգևոր, բարեգործական և այլ կազմակերպությունների ու անհատ անձանց հետ Խորհրդի հարաբերությունները կառուցվում են իրավահավասարության և փոխադարձ պայմանավորվածությունների ՎՊՄԻ-ի և սույն կանոնակարգի հիման վրա:

#### Բ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ջորավիզ լինել ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանը, պաշտպանել նրանց շահերն ու իրավունքները:

2. Նպաստել ուսանողների ուսումնառության արդյունավետության բարձրացմանը, կենսագործունեության ակտիվացմանը, նրանց գիտակրթական, մտավոր, ստեղծագործական, բարոյական և հոգևոր զարգացմանը:

3. Կազմակերպել ուսանողության ազատ ժամանցն ու հանգիստը՝ անմիջականորեն մասնակցելով ազգապահպան ու մշակութապահպան գործընթացներին:

4. Ստեղծել կապեր ՀՀ և արտերկրի բուհերի, ինչպես նաև գործող երիտասարդական կազմակերպությունների հետ:

5. Հնարավորության դեպքում իրականացնել սոցիալական և բարեգործական նշանակության ծրագրեր, նպաստել կենցաղային ու սոցիալական պայմանների բարելավմանը:

6. Մշակում և ՎՊՄԻ-ի ղեկավար մարմիններին ներկայացնել ուսանողական կյանքին և ուսումնակրթական գործընթացներին առնչվող հարցեր, տարբեր որոշումների նախագծեր և նպաստել դրանց ընդունմանն ու հետևողական

իրականացմանը:

**Գ. ՈՒՄԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

1. Ուես-ի բարձրագույն ղեկավար մարմինը ինստիտուտի Ուսանողական Խորհրդի ընդհանուր ժողովն է:

2. Ուես-ի ընդհանուր ժողովին մասնակցում են ֆակուլտետային Ուես-ների ներկայացուցիչները՝ ըստ ինստիտուտի ֆակուլտետների ուսանողների թվի համամասնությամբ:

3. Ընդհանուր ժողովը գումարվում է ուսումնական տարվա սկզբին: Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե նրան մասնակցում է ընդհանուր կազմի երկու երրորդից ավելին:

4. Ուես-ի նախագահության որոշմամբ, ինչպես նաև ֆակուլտետային Ուես-ների անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պահանջով կարող է հրավիրվել Ուես-ի արտահերթ ընդհանուր ժողով:

5. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են մասնակիցների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

6. Խորհրդի նախագահությունը կազմված է Ուես նախագահից, փոխնախագահ(ներ)ից, քարտուղարից, ֆակուլտետային Ուես նախագահներից և, ի պաշտոնե, հանձնաժողովների նախագահներից:

7. Ընդհանուր ժողովը՝

ա) քննարկում է Ուես-ի կանոնադրությունը, դրանում կատարում լրացումներ ու փոփոխություններ և ներկայացնում ինստիտուտի Խորհրդի հաստատմանը:

բ) Քննարկում է ընթացիկ և հեռանկարային հարցեր:

գ) Ընտրում է Ուես նախագահ, փոխնախագահ(ներ), քարտուղար:

դ) Լսում է նախագահության հաշվետվությունը ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Ուես-ի կատարած աշխատանքների մասին:

8. Ուես-ի նախագահությունը՝

ա) ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում իրականացնում է Ուես-ի աշխատանքների ղեկավարումը:

բ) Համակարգում է ֆակուլտետային Ուես-ների գործունեությունը:

գ) Նիստեր է գումարում առնվազն ամիսը մեկ անգամ, որտեղ քննարկվում են Խորհրդի ընթացիկ հարցերը, լսվում են զեկուցումներ ֆակուլտետներում և հանձնաժողովներում կառուարվող աշխատանքների մասին: Խորհրդի նախագահի կամ նախագահության 1/3-ի պահանջով կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

դ) Առաջադրում է ներկայացուցիչներ ինստիտուտի ամսագրի խմբագրակազմում և ինստիտուտի արհմիութենական կազմակերպություններում:

ե) Առաջադրում և հաստատում է հանձնաժողովների նախագահներին, իսկ անբավարար աշխատանքի դեպքում՝ անվստահություն հայտնում և դադարեցնում նրանց գործունեությունը:

զ) Իր կազմում կարող է ընդգրկել մեկական ներկայացուցիչ՝

- բուհի շրջանավարտներից,
- վարժարանի սաներից,
- ինստիտուտի սփյուռքահայ ուսանողներից:

ե) Անհրաժեշտության դեպքում հրավիրում է նախագահության արտահերթ նիստեր:

է) Նշանակում է հանձնաժողովների նախագահներին և անհրաժեշտության դեպքում վաղաժամկետ դադարեցնում նրանց լիազորությունները:

9. Ուես-ի նախագահության լիազորությունների ժամկետը լրանում է նորընտիր Ուես-ի ընդհանուր ժողովի անդրանիկ նիստում: Ժամկետից շուտ այդ լիազորությունները դադարեցվում են Ուես-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

10. Վերը նշված ոլորտներին չառնչվող կարևոր այլ հարցերով զբաղվելու համար Ուես-ը կարող է ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ:

11. Խորհրդի լիազորությունների ժամկետը 2 տարի է:

12. Ուես-ի նախագահը՝

ա) վարում է ընդհանուր ժողովի և նախագահության նիստերը, նիստերի ընթացքում կազմակերպում է նախագահության անդամների հաշվետվությունների ու առաջարկությունների լսում ու քննարկում:

բ) Խորհուրդը ներկայացնում է պետական մարմիններում և հասարակական կազմակերպություններում, ինստիտուտի ռեկտորատում և գիտխորհրդում:

գ) Տարին մեկ անգամ հանդես է գալիս հաշվետվությունով ուսանողական խորհրդի, ռեկտորի և գիտական խորհրդի առջև:

դ) Անհրաժեշտության դեպքում հրավիրում է Ուես-ի ընդհանուր ժողովի և նախագահության արտահերթ նիստեր:

ե) Համակարգում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքները:

զ) Առաջարկում է փոխնախագահ(ներ)ի և քարտուղարի թեկնածություններ:

Ուես-ի խորհրդի նախագահ 2 տարի ժամկետով կարող է ընտրվել ինստիտուտի առկա բաժնի ցանկացած ուսանող, որն աչքի է ընկնում բարձր առաջադիմությամբ և հասարակական ակտիվ գործունեությամբ՝ ընդհանուր ժողովի ողջ կազմի ձայների երկու երրորդ մասը բաց քվեարկությամբ ստանալու դեպքում:

է) ընդունում է որոշումներ, տալիս հանձնարարականներ և կարգադրություններ, հրավիրում է խորհրդակցություններ և իրականացնում ընդհանուր վերահսկողություն:

ը) ընտրվում է ընդհանուր ժողովում երկու տարի ժամկետով ձայների պարզ մեծամասնությամբ:

թ) Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նախագահի առաջարկությամբ նրան փոխարինում է Խորհրդի փոխնախագահը (կամ նրանցից մեկը), ով կատարում է Խորհրդի նախագահի տված հանձնարարականները:

13. Փոխնախագահը՝

ա) զբաղվում է ֆակուլտետների Ուես-ների և հանձնաժողովների աշխատանքների համակարգմամբ:

բ) Նախագահի բացակայության ժամանակ փոխարինում է նրան:

14. Քարտուղարը՝

ա) ղեկավարում է քարտուղարության աշխատանքները:

բ) Ուես-ի հաստատմանն է ներկայացնում և կազմակերպում ֆինանսական բաշխումները:

զ) Կազմակերպում է ֆինանսական բաշխումները:

15. ՈւՆԽ-ը ստեղծում է հանձնաժողովներ հետևյալ ոլորտների աշխատանքների կազմակերպման համար՝

ա) մշակույթի, սպորտի և ազատ ժամանցի,

բ) գիտաուսումնական,

գ) լրատվության և քարոզչության,

դ) ուսանողների իրավունքների պաշտպանության,

ե) արտաքին կապերի և հարաբերությունների:

16. Հանձնաժողովներն իրենք են որոշում իրենց նիստերի գումարման պարբերականությունը, դրանց ժամկետները և անհրաժեշտությունը:

17. Հանձնաժողովի նախագահը ՈւՆԽ-ի հաստատմանն է ներկայացնում՝

ա) իր հայեցակարգը տվյալ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ,

բ) հանձնաժողովի նախագահի տեղակալի և առնվազն երեք անդամների թեկնածություններ:

18. ՈւՆԽ-ը կարող է ստեղծել ակումբներ, որոնք հաշվետու են մշտական հանձնաժողովներին:

19. Ֆակուլտետի ինքնակառավարման բարձրագույն մարմինը ֆակուլտետի ուսանողական խորհուրդն է, որը ձևավորվում է ներկայացուցչական սկզբունքով: Նրա անդամները ընտրվում են կուրսերի ժողովներում ուսանողների թվի համամասնությամբ:

20. Ֆակուլտետի ՈւՆԽ-ը՝

20.1. պարբերաբար վերլուծում և ամփոփում է կուրսերի ընթացիկ առաջադիմությունները և հաճախումները:

20.2. Ուսանողներին շահագրգռում է ինքնուրույն աշխատանքի, նրանց ընդգրկում գիտահետազոտական աշխատանքներում, սպորտային և գեղարվեստական ինքնագործունեության խմբերում, զբաղվում է նրանց բարոյագեղագիտական և ազգային-քաղաքական դաստիարակությամբ:

20.3. Կազմակերպում է միջկուրսային ստուգատես-մրցույթներ, հանդիպումներ և այլն:

20.4. Ամիսը մեկ անգամ գումարում է նիստեր:

20.5. Նախագահության կամ խորհրդի անդամների ընդհանուր թվի 1/3-ի պահանջով կարող է հրավիրել ֆակուլտետի ՈւՆԽ-ի արտահերթ նիստ:

20.6. Կարող է ունենալ մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ:

21. Ֆակուլտետի ՈւՆԽ-ի՝

21.1. անդամների ձայների պարզ մեծամասնությամբ բաց քվեարկությամբ ընտրվում են ֆակուլտետի ՈւՆԽ-ի նախագահը, փոխնախագահը և քարտուղարը: Ֆակուլտետի ՈւՆԽ-ի և նրա ղեկավար մարմինների ընտրությունները կատարվում են տարեկան մեկ անգամ:

21.2. Նախագահը, փոխնախագահը և քարտուղարը ինստիտուտի ՈւՆԽ-ի անդամներ են ի պաշտոնե:

21.3. Նախագահը լիիրավ ձայնով մասնակցում է ֆակուլտետի խորհրդի նիստերին:

21.4. Նախագահությունը իր լիազորությունները ժամկետից շուտ դադարեցնում է ֆակուլտետի ՈւՆԽ-ի անդամների 2/3-ի որոշմամբ: Ֆակուլտետի ՈւՆԽ-ի նախագահի անբավարար աշխատանքի, պարտականությունների թերի կատարման կամ անգործության դեպքերում նախագահության կողմից վերջինիս կարող է հայտնվել

անվստահություն, որից հետո երկշաբաթյա ժամկետում ֆակուլտետի ՈւԽ-ը ընտրում է նոր նախագահ:

22. Կուրսերում բաց քվեարկությամբ ընտրվում են ուսանողական խորհուրդներ՝ առնվազն 5 հոգուց բաղկացած, որոնցից մեկը ընտրվում է կուրսի ՈւԽ-ի նախագահ:

23. Կուրսի ՈւԽ-ի անդամները իրենց լիազորությունները դադարեցնում են կուրսի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ:

24. Կուրսի ՈւԽ-ը ունի իր լիազոր ներկայացուցիչը ֆակուլտետի ՈւԽ-ի կազմում:

25. Կուրսի ՈւԽ-ի նախագահը հրավիրում և նախագահում է կուրսի ժողովները, ինչպես նաև հետևում ժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքին:

26. Կուրսի ՈւԽ-ը կազմակերպում է կուրսի ուսման, հաճախումների ստուգման մրցույթներ, հետևում համակուրսեցիների կարգապահությանն ու առաջադիմությանը:

27. Կուրսի ՈւԽ-ը հարց է բարձրացնում ֆակուլտետի ՈւԽ-ի առջև ուսանողներին խրախուսելու, իսկ կարգազանցներին կարգապահական տույժի ենթարկելու համար:

28. Խորհրդի նախագահությունն իրավունք ունի անբավարար աշխատանքի, պարտականությունների թերի կատարման կամ անգործության դեպքերում առաջ քաշել ֆակուլտետների ուսանողական խորհուրդների նախագահների անվստահության հարցը, որը ընդունվում է Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, որից հետո երկշաբաթյա ժամկետում ֆակուլտետի ուսխորհուրդը ընտրում է նոր նախագահ:

29. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) իր դիմումի համաձայն,

2) Խորհրդի անդամի անգործության հիմնավորմամբ,

3) Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ,

4) այլ բուհ տեղափոխվելիս,

5) ուսանողի կարգավիճակը կորցնելու հետևանքով:

4) Շնորհում է ուսանողական խորհրդի պատվավոր նախագահի, պատվավոր անդամի կոչումներ

#### Դ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. ՈւԽ-ը տնօրինում է նյութական և գույքային միջոցներ, անվճար օգտվում է ինստիտուտի տարածքային և գույքային միջոցներից: Նրա ֆինանսական միջոցները գոյանում են ինստիտուտի հաշվից կատարվող մասհանումներից, նվիրատվություններից, հանգանակություններից, կառավարության կողմից հատկացնող գումարներից և ՀՀ օրենսդրությամբ չհակասող այլ աղբյուրներից:

2. ՈւԽ-ը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ձեռք բերել և տնօրինել նյութական միջոցներ:

#### Ե. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Ինստիտուտի ՈւԽ-ը լուծարվում է ՀՀ օրենքներին, ինստիտուտի կանոնադրությանը համապատասխան, ինչպես նաև ՈւԽ-ի անդամների ընդհանուր թվի 2/3-ի որոշմամբ: Լուծարումից հետո ՈւԽ-ի միջոցներն օգտագործվում են ՈւԽ-ի կանոնադրական խնդիրների իրականացման համար:

#### Զ. ԱՆՑՈՒՍԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուիս կանոնադրության ընդունումից հետո բոլոր օղակներում, կանոնադրությանը համապատասխան, անցկացվում են ընտրություններ: